«Երիտասարդ պատմագետների ասոցիացիա» ՀԿ-ի

EduArmenia կրթական նախաձեռնություն

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման

դասընթաց **2023**

Հետազոտական աշխատանք

<u>Թեմա՝</u> Ինչու և ինչպես օգտագործել բնագիր և լրացուցիչ նյութերը դասապրոցեսում

Հետազոտող ուսուցիչ՝ Սարգսյան Անուշիկ

Դպրոց՝ Հրազդանի Վ. Սարոյանի անվան թիվ **11** հիմնական դպրոց

Բովանդակություն

Ներածություն----------3

Ինչ է բնագիր նյութը----------6

Բնագիր նյութերի տեսակները, որոնք հաճախ եմ

օգտագործում իմ պրակտիկայում---------- 10

Եզրակացություն----------15

Գրականություն----------16

Ներածություն

Հանրակրթական դպրոցում օտար լեզվի ուսուցումն իրականացվում է չափորոշչային պահանջներին համապատասխան: Օտար լեզվին տիրապետելը բարձրացնում է դպրոցականների հումանիտար կրթության մակարդակը, նպաստում է անհատականության ձևավորմանն ու սոցիալիզացմանը բազմամշակութային ու բազմալեզու աշխարհի հարափոփոխ պայմաններում, զարգացնում է նրանց ճանաչողական կարողությունները, խոսքն ու մտածողությունը, ուսումնական մյուս առարկաներից սովորողների կոնկրետ պատկերացումների հարստացմանը, կարգավորում է անհատի վարքը, խթանում է այս կամ այն խոսքային գործունեությունը,համագործակցությունը, և ,իհարկե , օտար լեզուների իմացությունն ընձեռում է տեղեկատվության գոյություն ունեցող անսպառ աղբյուրներից օգտվելու լայն հնարավորություններ :

Այսօր խիստ կարևորվում է լայն իմաստով ինտեգրումը գիտելիքների ամենատարբեր , ինչպես հումանիտար, այնպես էլ բնագիտական ոլորտների ուսումնական առարկաների միջև, քանի որ լեզուն՝ որպես հաղորդակցության միջոց, ոչ միայն հնարավորություն է ընձեռում ամենատարբեր բնագավառներից տեղեկատվություն և գիտելիքներ ձեռք բերել, այլ նաև նպաստում է սովորողների տրամաբանական , վերլուծական մտածողության զարգացմանը, ծանոթացնում է ճանաչողության համապատասխան մեթոդներին:

Հանրակրթական դպրոցում « Օտար լեզու » ուսումնական առարկայի գործառույթները իրականացնելու համար գոյություն ունեն կոնկրետ լեզվի, այս դեպքում ՝ ֆրանսերենի, ուսուցման հիմնական սկզբունքներ, նպատակներ, բովանդակությանը ներկայացվող պահանջներ, հաղորդակցական կարողությունների շրջանակ և այլն:

Ֆրանսերենի ուսուցման սկզբունքները մի քանիսն են, որոնց հիմնական նպատակը հետևյալն է՝ ընդլայնել սովորողի հաղորդակցվելու և համագործակցելու կարողությունները: Հիմնական դպրոցում << Օտար լեզուներ>> բնագավառի ուսուցման հիմնական նպատակն է ԼԻԵՇ-ի B1 մակարդակին համապատասխան օտար լեզվով հաղորդակցական կարողությունների զարգացումը: [1]

Հաղորդակցական իրազեկությունը ենթադրում է ոչ միայն լեզվական միջոցների յուրացում, այլ նաև դպրոցականների հաղորդակցում լեզվակիր ժողովրդի մշակույթին: Այս տեսանկյունից հատկապես կարևորվում է իրական բնագիր նյութերի և լրացուցիչ նյութերի ստեղծումն ու օգտագործումը:

Բնագիր նյութերը և լրացուցիչ նյութերը, օգտագործվելով ֆրանսերենի դասաժամի ընթացքում, հաղորդակցման յուրահատուկ գործառույթ են իրականացնում: Դրանց օգտագործումը ապահովում է ուսուցման պրոցեսի իրական,կենդանի, ակտուալ կողմը, դրանով բարձրացնելով սովորողի ՝ տվյալ լեզուն սովորելու մոտիվացիան և հետաքրքրասիրությունը: Դասապրոցեսի ընթացքում բնագիր նյութերի և

[1] << Օտար լեզուներ>> բնագավառի 2-12-րդ դասարանների չափորոշիչ

լրացուցիչ նյութերի օգտագործումը հանդիսանում է օտար լեզու սովորելու դրդապատճառներից մեկը, քանի որ աշակերտները ունեն տարբեր կարիքներ, հետաքրքրություններ: Այն ուսուցման պրոցեսին հաղորդում է հետաքրքրություն և արժևորում է այն: Բնագիր նյութերը և լրացուցիչ նյութերն օգնում են բազմացնելու և բազմապիսի դարձնելու մեր ռեսուրսները, որոնք էլ օգնում են ուսուցման պրոցեսն ավելի արդյունավետ կազմակերպելու գործում:

Հաղորդելով իրական,բնական ազդեցություն դասապրոցեսին՝ բնագիր նյութը և/կամ լրացուցիչ նյութը կոչված է կոնկրետացնելու ֆրանսերենի ուսուցման կարևորագույն նպատակներից մեկը, այն է՝ իրական հաղորդակցության ուսուցում: Բնագիր նյութերի և լրացուցիչ նյութերի միջոցով սովորողը ծանոթանում է լեզվի տարբեր շերտերի բառապաշարի հետ, յուրացնում բառեր, արտահայտություններ ոչ միայն գրական լեզվից,այլ նաև՝ խոսակցական, որը ոչ պակաս կարևոր է:

Դասապրոցեսի ընթացքում բնագիր նյութերի և/կամ լրացուցիչ նյութերի օգտագործումը թույլ է տալիս , որ աշխատանքը լինի բազմատեսակ և իրավիճակային: Այն հնարավորություն է տալիս բազմացնել աշխատանքային ռեսուրսները, ուսուցանվող լեզվին հաղորդում է ակտուալություն: Ինչ վերաբերում է սովորողներին, ապադասապրոցեսի ընթացքում բնագիր նյութերի օգտագործումը բարձրացնում է նրանց ՝ օտար լեզու սովորելու մոտիվացիան և ապահովում է վստահություն ուսուցման պրոցեսի հանդեպ:

Բնականաբար օտար լեզվի ուսուցման կազմակերպման համար կան համապատասխան դասագրքեր, որոնցում ամեն ինչ նախօրոք հաշվարկված ու ներկայացված է հեղինակի կողմից: Սակայն դասապրոցեսի ընթացքում բնագիր նյութերի և/կամ լրացուցիչ նյութերի օգտագործմամբ հնարավոր է դառնում ավելի խորքային ուսումնասիրել որևէ թեմա, որն ավելի է հետաքրքրում սովորողներին նրանց տարիքային, կամ նախասիրությունների բազմազանության առանձնահատկություններով պայմանավորված, կամ պարզապես ունիվերսալ դասապրոցեսից ավելի կոնտեքստային ուսուցում կազմակերպելու համար: Սովորողներն ունեն տարբեր նախասիրություններ, պահանջներ, և այդ առանձնահատկություններով պայմանավորված աշխատանքի կազմակերպումը բարձրացնում է նրանց ՝ օտար լեզու սովորելու մոտիվացիան:

Բնագիր և/կամ լրացուցիչ նյութերի օգտագործումը դասապրոցեսում մոտիվացիոն դեր է կատարում տարբեր մակարդակի սովորողների մոտ, բայց մոտիվացիայի առումով դրա արդյունավետությունն առավել տեսանելի է սկսնակների մոտ: Սկսնակ սովորողը մոտիվացված է հատկապես այն ժամնակ , երբ հասկանում է լեզվակիրների խոսակցությունները:[2]

[2]https://ru.scribd.com/document/397023698/Pourquoi-Utiliser-Des-Documents-Authentiques-en-Classe-de-Langue#

Գլուխ **1.** Ի՞նչ է բնագիր նյութը

Բնագիր նյութը, ստեղծված, մշակված է լեզվակրի կողմից՝ լեզուն ուսումնասիրողի, լեզվին տիրապետողի համար, այս դեպքում՝ ֆրանսախոսի (ֆրանկոֆոնի) կողմից ՝ ֆրանսախոսի (ֆրանկոֆոնի) համար, Բնագիր նյութը տեսողական,ձայնային կամ տեսաձայնային նյութ է օտար լեզվով պատրաստված լեզվակիր միջավայրում, որը դասավանդողն օգտագործում է որպես օտար լեզվի ուսուցման մեթոդ (Méthode du FLE), դասաժամին այն օգտագործելով տարբեր աշխատանքներում, վարժություններում:[3]Այս նյութերը կոչվում են բնագիր, քանի որ դրանք ՝ մանկավարժական տեսանկյունից մշակված չեն, օգտագործվում են հենց այնպես, ինչպես կան, բնագիր տեսքով, առանց որևէ փոփոխության երթարկվելու,առանց մշակման: Նյութը որևէ փոփոխության ենթարկվելու դեպքում (մասերի, պարագրաֆների բաժանում, տեղեկության ծավալի կրճատում և այլն) դառնում է ուսումնական նյութ:Դասապրոցեսի ընթացքում բնագիր նյութը կարող է հանդես գալ որպես լրացուցիչ նյութ՝ լրացելով և հարստացնելով ուսումնական նյութը:

Որպես բնագիր նյութ և/կամ լրացուցիչ նյութ կարելի է օգտագործել

- Դասագրքեր
- Դասացուցակ,դպրոցական տարբեր թերթիկներ
- Սկավառակների,տեսահոլովակների տեսքով ձայնագրված երգեր
- Գովազդային հոլովակներ՝ ռադիոյի, հեռուստատեսության կամ մամուլում տպագրված
- Հեռուստատեսային հաղորդումներ՝ լուրեր, խաղեր, հարցազրույցներ, ֆիլմեր, վավերագրական ֆիլմեր, քննարկումներ, եղանակի տեսություն և այլն
- Ինչպես նաև տեքստեր, պոեմներ,մուլտֆիլմեր,ամսագրեր, թերթեր, կինոյի, թատրոնի, երաժշտության ծրագրեր, հեռախոսային զրույցի, օրացույց, քաղաքի հատակագիծ, երկրի քարտեզ, բացիկ, գնացքների չվացուցակ, հեռագիր, կտրոններ, անձնագիր, փոքրիկ հայտարարություններ,

[3] https://journal.lib.uoguelph.ca/index.php/synergies/article/download/1173/1763?inline=1

խոհանոցային բաղադրատոմս, ռեստորանի հաշվացանկ, մուլտֆիլմ, թեմատիկ լուսանկարներ , տարբեր տրանսպորտային միջոցների տոմսեր և այլն:[4]

Ժամանակակից համացանցի դարաշրջանում բնագիր նյութեր և/կամ լրացուցիչ նյութեր գտնելու գործընթացը շատ հեշտ է: Այստեղ կարելի է գտնել անհրաժեշտ ամեն ինչ հատկապես Google կամ Yahoo կայքերի օգնությամբ: Նախևառաջ, պետք է առանձնացնել բնագիր նյութերի և լրացուցիչ նյութերի տեսակները ՝ գրավոր , բանավոր (տեսողական, ձայնային, տեսաձայնային) :

Որպես գրավոր բնագիր նյութեր և/կամ լրացուցիչ նյութեր կարելի է օգտագործել գրավոր մամուլից հոդվածներ՝ հոդված ամսագրից, փոքրիկ հայտարարություն, գովազդ և այլն :

Նշված բնագավառներում ֆրանսիական ամենահայտնի անվանումներն են.

Մամուլի համար՝

- Revue2presse, Courrier International, Rue 89, les quotidiens *Le Monde, Le Figaro, L'Equipe, Libération*, etc.

Ռադիոյի համար՝

- France Culture, RFI, RTBF (belge), ARTE radio, etc.

Հեռուստատեսության համար

- TV 5 Monde, ARTE reportage, La Télé Libre, les journaux télévisés de France 3, la télévision de découverte francophone

Նշված հեռուստաալիքներով հատկապես շատ հեռուստահաղորդումներ կան ֆրանկոֆոն հեռուստադիտողի համար , այդ թվում նաև սկսնակների համար

Տեսաձայնային հոլովակների համար

- YouTube ou Daily motion

Բնականաբար, ամեն տեսակի բնագիր նյութ հնարավոր է գտնել համացանցում:

Դասապրոցեսի ընթացքում բնագիր նյութ և/կամ լրացուցիչ նյութ ընտրելիս ուսուցիչը պետք է ունենա մի շարք հարցերի պատասխաններ: Օրինակ նա հստակ պետք է պատկերացնի, թե տվյալ նյութի օգտագործմամբ ինչ պիտի սովորեցնի; Բացի այն , որ վերջնարդյունքը պետք է բխի ՀՊԶ-ից, այն նաև պետք է լինի

[4] https://journal.lib.uoguelph.ca/index.php/synergies/article/download/1173/1763?inline=1

արդիական և համապատասխանի սովորողների նախասիրություններին: Նյութի ուսուցման կազմակերպման ձևը նույնպես շատ կարևոր է .այն պետք է համապատասխանի սովորողների կարողություններին: Պետք է հստակեցնել սովորողների անելիքները; Այստեղ երբեմն անհրաժեշտ է կազմակերպել շերտավորված ուսուցում: Անհրաժեշտ է դասաժամն ապահովել անհրաժեշտ նյութերով. դիդակտիկ պարագաներ, գրենական պիտույքներ, և , իհարկե, ՏՀՏ գործիքներ: Ամենակարևոր կետերից է նաև ժամանակի կառավարումը. անհրաժեշտ է սահմանել աշխատանքի յուրաքանչյուր փուլի համար կոնկրետ ժամանակ:

Այս ընդհանրական հարցերի պատասխանները կոնկրետացնելուց հետո, նաև կարող ենք մտածել այլ կազմակերպչական հարցերի շուրջ՝ հստակեցնելով դասի նպատակներն ու վերջնարդյունքները, ընտրված նյութի՝ դպրոցական ծրագրին համապատասխանությունը, արդյո՞ք դասի նպատակը համապատասխանում է սովորողների իրական պահանջներին: Կարևոր է նաև որոշել, թե որո՞նք են անհրաժեշտ նախապայմաններ և արդյո՞ք սովորողները բավարար չափով տիրապետում են դրանց: Ժամանակի կառավարման կետի հետ կապված, դասավանդողը պետք է հստակ պատկերացնի, թե արդյոք առարկային հատկացված ժամանակը թույլ տալիս է հաճախ դասաժամի ընթացքում օգտագործել բնագիր ու լրացուցիչ նյութեր, ինչ ծավալի աշխատանքներ կարող է կազմակերպել: Եվ ամենակարևոր կետերից է այն հանգամանքը, որ անհրաժեշտ է հստակ որոշել, թեկուզ նախնական ու մոտավոր, թե որոնք են սովորողների իրական սպասումները:

Բնագիր նյութ և /կամ լրացուցիչ նյութ ընտրելիս պետք է հաշվի առնել մի քանի նախապայման, նպատակարարմար է , որ այն

- Համապատասխանի սովորողների մակարդակին, այլապես դասապրոցեսը պարզապես կվերածվի տեքստի բացատրության:
- Ցույց տա առօրյա հաղորդակցման կոնտեքստներում ֆրանսերենի հարստությունը և հնարավորությունները:
- Կարողանա ծանոթացնել ուսուցանվող լեզվի մշակույթին առանց սովորողին « շոկի» ենթարկելու, քանի որ միևնույն երևույթը կարող է տարբեր կերպ ընկալվել տարբեր մշակույթներում: Հետևաբար, ուսուցիչը, բնագիր նյութ ընտրելիս, պետք է հաշվի առնի նրա բովանդակությունը, նկարները, ուղերձը և այլն:
- Կարողանա հաղորդակից դարձնել ուսուցանվող լեզվի քաղաքակրթությանը:
- Արծարծի արօրյա կյանքին վերաբերվող խնդիրներ:
- Ունենա ծավալ սովորողների մակարդակներին համապատասխան: պետք է նկատի ունենալ, որ, որքան նյութը երկար լինի, այնքան դրանում կլինեն բարդ և անծանոթ բառեր, արտահայտություններ, և ընդհանրապես երևույթներ:
- Ունենա տարբերակներ (օրինակ՝ միևնույն երգը տարբեր կատարողների մատուցմամբ)

- Երբեմն ,որպես աշխատանքի բազմազանություն, լինի լեզվի տարբեր շերտերի բառապաշարներ ներկայացնող նյութ:
- Կապ ունենա այն կարողության հետ, որն ուզում ենք զարգացնել:
- Կիրառելի լինի տարբեր հաղորդակցական իրավիճակներում (հարց ուղղելիս, խորհուրդ կամ կարգադրություն տալիս, ինչ-որ մի բան հիմնավորելիս, սեփական կարծիքը հայտնելիս և այլն:
- Համապատասխանի սովորողների տարիքին և հետաքրքրություններին շրջանակին:
- Կապ ունենա ուսուցանվող լեզվի երկրի առօրյա կյանքի հետ:
- Ունենա ճշված սկզբնաղբյուրը
- Ունենա ամսաթիվ
- Ունենա հեղինակ, եթե վերջինս հայտնի անձ է, ապա ավելի հեշտ կլինի նյութը հասկանալ:[5]

Եթե խոսքը բանավոր բնագիր նյութի և /կամ լրացուցիչ նյութի մասին է,ապա պետք է ուշադրություն դարձնել

- Այն հանգամանքին,թե ինչպես են խոսում՝ արագ թե դանդաղ,դա նույնպես պետք է համապատասխանի սովորողների մակարդակին, բառապաշարի շերտին,որին պատկանում է տվյալ նյութը: Սկսնակների (A1) համար դժվար կլինի հասկանալ խոսակցական բառապաշարով որևէ դիալոգ կամ խոսակցություն:
- Այն հանգամանքին,որ բնագիր նյութի և /կամ լրացուվիչ նյութի մեջ լինեն այդ լեզվին հատուկ այնպիսի ձայնարկություններ, բառեր, ինչպիսիք են օրինակ « heu; Ben; Bon;..» և այլն, քանի որ դրանք բնորոշ են միայն այդ լեզվին,և դրանց վերլուծությունը, աշխատանքը այդպիսի բառերի հետ կարող է լինել շատ հետաքրքիր:
- Բանավոր նյութը ունենա գրավոր տառադարձություն, որտեղ կան բոլոր դադարները:Այս հանգամանքը պարտադիր չէ, բայց ցանկալի է հատկապես սկսնակների համար (A 1)

Դասաժամի ընթացքում բնագիր նյութի և /կամ լրացուցիչ նյութի հետ աշխատելուց առաջ անհրաժեշտ է, ծանոթանալ ամբողջ նյութին, ճշտել նյութի պարունակած ինֆորմացիայի հավաստիությունը, խուսափել վիճահարույց թեմաներից, որոնք կարող են առաջացնել անկառավարելի իրավիճակներ:

[5] URL :https://journal.lib.uoguelph.ca/index.php/synergies/article/download/1173/1763?inline=1

Գլուխ 2.Բնագիր նյութերի տեսակները, որոնք հաճախ եմ օգտագործում իմ պրակտիկայում

Ֆրանսերենի դասաժամի ընթացքում օգտագործվող ամենաարդյունավետ բնագիր նյութերից և /կամ լրացուցիչ նյութերից է երգը: Այն ամենակատարյալ ձևով ցույց է տալիս ոչ միայն ֆրանսերենի գեղեցկությունը, այլ նաև ՝ լեզվական միջոցների ու բառապաշարի հարստությունը:

Դասաժամի ընթացքում երգը որպես բնագիր նյութ օգտագործելիս ունկնդրումը կարող է ունենալ հետևյալ նպատակները.[6]

- Լսել լսելու համար
- Լսել հայտնաբերելու համար
- Լսել ընտրություն կատարելու համար
- Լսել ինչ-որ բան ճանաչելու համար
- Լսել բացահայտելու համար
- Լսել վերածևակերպելու համար
- Լսել ասոցիացիաներ , նմանություններ գտնելու համար

Դասաժամի ընթացքում ցանկալի է կատարել հետևյալ աշխատանքները

Մինչ լսելը

[6]URL :space.univ-eloued.dz/bitstream/123456789/14147/1/mémoire%20fin%20d%27étude.pdf, էջ 29

Այս փուլի նպատակն է նախապատրաստել լսելուն և սովորողների հետաքրքրությունն արթնացնելը: Լսելուն նախապատրաստելիս կարելի է

- Կազմակերպել փոքրիկ քննարկում երգի թեմայով կամ վերնագրի շուրջ
- Սովորողներին հանձնարարել առաջարկված թեմայի շուրջ իրենց ծանոթ բառեր փնտրել, ասել: Կարելի է հանձնարարել թվարկված բառերով փոքրիկ տեքստ գրել
- Սովորողներին հանձնարարել նկարագրել երգի թեմայի հետ կապ ունեցող լուսանկար, նկար
- Սովորողներին ասել երգի վերնագիրը և հարցնել նրանց սպասելիքները
- Ծանոթանալ երգի թեմայի հետ առնչություն ունեցող որևէ տեքստի
- Գրել մի նախադասություն կամ մի հարց ուղղել, որը կառաջացնի երգի թեմայի շուրջ մի քննարկում՝ սովորողներին թույլ տալով հայտնել իրենց կարծիքը, զգացմունքները, փորձը
- Տալ առաջին քառատողը և շարունակության վերաբերյալ կարծիքներ հարցնել
- Եվ այլն

Լսելու ընթացքում

- Կարելի է բաժանել հարցաթերթիկ, որտեղ անհրաժեշտ է նշումներ անել
- Առանձնացնել որևէ թեմայի հետ կապ ունեցող բառերը
- Կարելի է վերցնել մի բառ, օրինակ՝ « printemps », և պարզել, թե քանի անգամ է այն լսվում
- Առանձնացնել տարբեր տարրեր՝ բանալի բառեր, հատուկ անուններ և այլն
- Առանձնացնել կրկներգը
- Ճշտել լսելուց առաջ երգի թեմայի շուրջ հայտնած կարծիքները
- Առանձնացնել զգացմունք արտահայտող բառեր, արտահայտություններ
- Բաժանել վարժություններով թերթիկներ, որտեղ անհրաժեշտ է լրացնել բաց թողնված բառը: Սովորողներին օգնելու համար կարելի է այդ բառերը խառը գրված լինեն թերթիկի վրա
- Երգը կարելի է լսել հետևյալ կերպ. Լսել մի հատված, անջատել, շարունակության վերաբերյալ ենթադրություններ անել, այնուհետև միացնել ձայնագրությունը և ճշտել

Լսելուց հետո՝ ձեռքի տակ ունենալով երգի տեքստը

Տարբեր աշխատանքներ՝ տնում, դասակարգում, ճիշտ տարբերակի ընտրություն և այլն

- Փնտրել բոլոր հերոսներին, առարկաները, վայրերը
- Տեքստի մեջ գտնել զգացմունք արտահայտող բոլոր բառերը
- Առանձնացնել բառ կամ բառեր, գտնել հոմանիշները
- Ճիշտ դասավորել քառատողերը
- Եվ այլն

Կարելի է նաև երգը լսել ձեռքի տակ ունենալով բառերը

- Երգելու համար
- Խառը քառյակները ճիշտ դասավորելու համար
- Բաց թողնված բառերը լրացնելու համար
- Եվ այլ

Լսելուց հետո՝ առանց տեքստի

Այս փուլի ընթացքում սովորողների երևակայությունը, ստեղծագործական և կրեատիվ միտքը զարգացնելու նպատակով կարելի է նրանց առաջարկել

- որևէ անսպասելի միտք ասել,
- ուղղել ավանդական հարցերը՝ ո՞վ, որտե՞ղ, ե՞րբ, ինչպե՞ս, ինչու՞
- ասել սեփական կարծիքը, զգացմունքները, տպավորությունները
- եթե վերնագիրը նախօրոք չի ասվել, ապա կարծիքներ ասել, վեջում լսել բնագրի տարբերակը
- ստեղծագործել՝ բանալի բառերով կազմելով փոքրիկ բանաստեղծություն
- կազմակերպել քննարկում երգի տեքստի թեմայի շուրջ
- համապատասխան թեմայով գտնել մի երգ մայրենի լեզվով և համեմատել
- համացանցից գտնել երգչի կամ խմբի , երգի տեքստի թեմայի վերաբերյալ տեղեկություն
- և այլն

Որպես բնագիր նյութ՝ և /կամ լրացուցիչ նյութ երգը կարելի է օգտագործել ուսումնական շատ թեմաների շրջանակներում՝կենսագրական, երկրագիտական և այլն:

Թվարկված նախապատրաստական, լսելուց կամ դիտելուց հետո առաջարկվող աշխատանքները կարելի է օգտագործել մնացած բոլոր բնագիր և/կամ լրացուցիչ նյութերի հետ աշխատելիս՝ համարեցնելով նյութի տեսակի հետ:

Հաջորդ լրացուցիչ նյութը, որը նույնպես հաճախ եմ օգտագործում ֆրանսերենի դասաժամին լուսանկարն է: Այս բնագիր նյութի և/կամ լրացուցիչ նյութի օտագործման նպատակն է զարգացնել սովորողների ճանաչողական կարողությունները, երևակայությունը, խոսելու , կարծիք հայտնելու կարողությունը, հարստացնել բառապաշարը:Օտար լեզվի դասաժամին անհրաժեշտ է ստեղծել հաղորդակցման շարժառիթ՝ նպատակ ունենալով հետաքրքրություն առաջացնել սովորողների մոտ: Այդպիսին կարող է լինել հենց լուսանկարը:

Լուսանկարը դիտելիս կարելի է դարձյալ ուղղել ավանդական հարցերը՝ ո՞վ, որտե՞ղ, ե՞րբ, ինչպե՞ս, ինչու՞:

Կարելի է նաև

- Նկարագրել լուսանկարը
- Կազմակերպել հետևյալ աշխատանքը. Սովորողներից մեկը նկարագրում է լուսանկարը, իսկ մյուսները մի շարք լուսանկարներից ընտրում են համապատասխանը:
- Հարցնել սովորողների տպավորությունները
- Կառուցել դիալոգ լուսանկարի հերոսների միջև
- Սովորողներին հանձնարարել, որ բերեն թեմատիկ այլ լուսանկարներ, կամ պարզապես ,օրինակ լուսանկար ամառային արձակուրդից կամ ընտանեկան հանգստից, որի վերաբերյալ նրանք կխոսեն
- Լուսանկարին վերնագիր տալ
- Լուսանկարի վերաբերյալ որևէ պատմություն հորինել
- Առանձնացնել և արժևորել լուսանկարում պատկերված որևէ իր , վայր կամ անձի
- Համեմատել 2 կամ ավելի լուսանկարներ, ասել դրանց նմանություններն ու տարբերությունները
- Պատկերացնել լուսանկարի շարունակությունը
- Պատկերացնել որևէ իրադարձություն , որ տեղի է ունենում տվյալ վայրում
- Կազմակերպել ֆոնարկում լուսանկարչության վերաբերյալ. Արդյո՞ք իրավուն ունեն ամեն ինչ հրապարակել: Ավանդակա՞ն թե՞ թվային լուսանկարչական ապարատ: Կո՞ղմ եք թե՞ դեմ պապարացիներին:
- Եվ այլն

Լուսանկարները ևս կարելի է օգտագործել տարբեր թեմաների շրջանակներում՝ երկրագիտական, կենսագրական, ընտանիքի վերաբերյալ, ժամանցի և այլն:

Իմ դասաժամերին շատ հաճախ լուսանկարն օգտագործում են դասի խթանման փուլում, որի ժամանակ այն հանդիսանում է այսպես կոչված դասի << խայծը>>: Հատկապես այդ փուլում այն օգնում է առաջացնել հետաքրքրություն, աշակերտների կողմից հնչեցրած մտքերը հատկապես նպաստում են բառապաշարի հարստացմանը: Այնուհետև, շատ հաճախ կազմակերպում ենք խմբային աշխատանքներ, որոնց ընթացքում վերևում մատնանշված հարցերի շուրջ կազմակերպում ենք տարբեր աշխատանքներ ու ֆոնարկումներ:

Լուսանկարների և երգերի վերլուծության համար թվարկված հարցերի համադրությամբ կամ պակասեցմամբ կարելի է աշխատել ֆիլմերի, տեսաձայնային սկավառակների հետ՝ ուղղելով ո՞վ, որտե՞ղ, ե՞րբ, ինչպե՞ս, ինչու՞ հարցերը, և կազմելով համապատասխան հարցաշար: Օրինակ՝

- Հանձնարարել առանձնացնել որոշակի թեմայով արտահայտություններ(օրինակ ՝ քաղաքավարություն), որևէ խոսքի մաս,
- սովորողների առաջարկել առանձնացնել տեսահոլովակի մի քանի տարբեր՝ վայրեր, հերոսներ, առարկաներ, գործողություններ…
- սովորողներին տալ երգի թեման և առաջարկել գրել թեմայի վերաբերյալ բառեր

- նրանց տալ ածականների ցանկ՝ արագ, դանդաղ, աշխույժ, մոնոտոն, տարբեր և այլն, նայել տեսահոլովակը և ընտրել այն բնութագրող ածականները
- վերլուծել դիտածը.ովքե՞ր էին հերոսները, ի՞նչ պատմություն է:
- տարբեր հոլովակներ դիտել կամ դրանցից հատվածներ և սովորողներին առաջարկել դրանք դասակարգել, որից հետո նրանք պիտի հիմնավորեն իրենց ընտրությունը
- օգտագործել երգերի կարաոկե տարբերակները
- սովորողներին հանձնարարել պատրաստել հարցազրույց երգչի հետ, ներկայացնել նրա վերաբերյալ տեղեկություններ
- երգչին համակ գրել՝ նրան ասելով մեր կարծիքը երգի, տեսահոլովակի վերաբերյալ, նրանից ինչ –որ բան խնդրել, նրան որևէ խորհուրդ տալ
- տալ բառերի ցանկ և առաջարկել ընդգծել այն բառը, որը հնչում է տեսանյութի մեջ
- Հանձնարարել նշումներ անել նյութը համառոտ ներկայացնել կարողանալու համար
- Համեմատել ձայնը պատկերի հետ (տեսահոլովակի դեպքում)
- Տեսածի և լսածի վերաբերյալ արտահայտել կարծիք
- Եվ այլն

Դասապրոցեսի ընթացքում գրավոր նյութերի հետ աշխատելիս նախապատրաստական հարց ու պատասխանից հետո, որոնք արդեն նշել եմ մյուս նյութերի դեպքում(թեմայի շուրջ գիտելիքներ, կարծիքներ),կարելի է աշխատել հետևյալ հարցաշարի հետ.

- Ընդգծել բառեր և արտահայտություններ, որոնք վերաբերում են միևնույն անձին,առարկային կամ երևույթին
- Ընդգել միևնույն անձին բնութագրող տարբեր արտահայտչամիջոցներ
- Ընդգծել պարագա ցույց տվող բառերը
- Ընդգծել բայերը
- Ընդգծել նկարագրող արտահայտությունները
- Բաժանել նույն տեքստը խառը պարագրաֆների,և դասավորել ճիշտ հերթականությամբ
- Պարագրաֆներին վերնագրեր տալ
- Երկու այունյակով ներկայացնել դեմ և կողմ երևույթներ
- Աշխատել բառեր բաց թողնված տեքստերի հետ
- Ավարտել տրված հատվածը
- Համեմատել նույն թեմայով այլ նյութերի հետ
- Եվ այլն

Ֆրանսերենի դասաժամին շատ տեղին և օգտակար է նաև որևէ ամսագրից առանձնացված հոդվածի շուրջ կազմակերպված աշխատանքները: Այստեղ հոդվածը հանդես է գալիս որպես գրավոր բնագիր նյութ:Աշխատանքները պլանավորելիս պետք է նախևառաջ նկատի ունենալ , թե որքանով է հոդվածի մեջ

քննարկվող թեման ակտուալ , ոչ հնացած, երկարաժամկետ: Օրինակ՝ անհմաստ է աշխատանքներ կազմակերպել ընտրությունների վերաբերյալ որևէ հոդվածի շուրջ, հատկապես , եթե այդ ընտրություններն արդեն անցյալում են:Սա վերաբերում է աշխատանքի բովանդակային մասին: Այնուհետև, կատարվում են այնպիսի առաջադրանքներ, որոնց արդյունքում հատկապես զարգանում է սովորողների գրավոր խոսքը: Նպատակահարմար է բնագիր հոդվածներով աշխատանքներ պլանավորել բայի ժամանակաձևերն ուսումնասիրելիս, առանձին խոսքի մասերն ուսումնասիրելիս, բառային աշխատանքներ կատարելիս:

Նմանատիպ աշխատանքների համադրությամբ, ավելացմամբ կամ պակասեցմաբ կարելի է ֆրանսերենի դասաժամին որպես ծրագրային նյութը լրացնող և հարստացնող միջոց օգտագործել նաև մյուս բնագիր նյութերն և/կամ լրացուցիչ նյութերը , բնականաբար աշխատանքի տեսակներն ավելացնելով կամ պակասեցնելով, պարզեցնելով կամ բարդացնելով՝ նյութի տեսակին, սովորողների՝լեզվին տիրապետելու մակարդակին համապատասխան:

Աշխատանքի տեսակները փոքր-ինչ տարբեր են դասապրոցեսի ընթացքում դասագրքերի՝ որպես բնագիր նյութի և/կամ լրացուցիչ նյութի հետ աշխատելիս: Այստեղ նույնպես գործ ունենք գրավոր նյութերի հետ, որոնք տեսակով փոքր-ինչ տարբեր են և հիմնականում ուսումնական նյութեր են, հետևաբար պահանջում են նույն աշխատանքի տեսակները, իհարկե այս դեպքում առաջնային է սովորողների նախասիրությունները, հետաքրքրությունները: Օրինակ լրացուցիչ դասագրքի օգնությամբ կարելի է ավելի խորությամբ ծանոթանալ որևէ գրողի կամ բանաստեղծի ստեղծագործություններին,կենսագրությանը, կամ ուսումնասիրել որևէ բերականական նյութ , կարելի է ընտրել ծրագրային նյութին համապատասխան առաջադրանքներ՝ ընտրության ընթացքում կարևորելով սովորողներ՝ լեզվին տիրապետելու մակարդակը:

Եզրակացություն

Բնագիր նյութերը և/կամ լրացուցիչ նյութերը դասապրոցեսի ընթացքում ապահովում են այնպիսի մթնոլորտ, որում սովորողները իրենց զգում են լեզվակիր երկրի մի մասնիկը, առաջանում է հետաքրքրություն տարվող աշխատանքի նկատմամբ:Դրանք օգնում են հասկանալ, որ ֆրանսերենը, միայն իրենց դասագրքերում գրված քերականական կանոնները չեն, այն կենդանի, ակտուալ, հաղորդակցման ընթացքում կիրառելի և շատ գեղեցիկ լեզու է:Այս համատեքստում դրանք կարևորվում են , քանի որ դրսևորվում են հաղորդակցական իրադրություններում, այլ ոչ թե ցույց են տալիս ուսուցանվող լեզվի միայն որոշակի իրադրություններում գործածությունը: Այս հանգամանքով է պայմանավորված այն, որ բնագիր նյութերն ու լրացուցիչ նյութերը սովորողների մոտ բարձրացնում են մոտիվացիան, առաջացնում են հետաքրքրություն , նրանք կարողանում են դրանցում իրենց նախասիրություններին համապատասխան ինչ-որ բան գտնել: Դրանք սովորողներին ներկայացնում են «ֆրանկոֆոնիա » երևույթը, ծանոթացնում ֆրանկոֆոն երկրների մշակույթին, կենցաղին, սովորույթներին, ծանոթացնում են լեզվի խոսակցական տեսակին, որը բավականին տարբեր է իրենց դասագրքերի նորմավորված տարբերակից: Ֆրանսերենի դասաժամին բնագիր նյութերի և /կամ լրացուցիչ նյութերի հաճախակի օգտագործումը թույլ է տալիս սովորողների մոտ զարգացնել սովորած լեզուն կիրառելու կարողությունը, հաղթահարել խոսելու և բանավոր, խոսքը կիրառել և հասկանալ փորձելու վախը: Դրանք օգնում են զարգացնելու հատկապես բանավոր խոսքը՝ նպաստելով հաղորդակցական կարողությունների ձևավորմանը:

Օգտագործված գրականություն

1.«Օտար լեզուներ» ուսումնական բնագավառի փորձնական չափորոշիչ և ծրագրեր

2. URL :https://www.institut-francais.org.-Malette pédagogique 11.08.2023

3 . https://gerflint.fr/Base/Europe15/gavris.pdf 04 .08.2023

4. URL : https://ru.scribd.com/document/397023698/Pourquoi-Utiliser-Des-Documents-Authentiques-en-Classe-de-Langue# 04. 08.2023

5.URL :https://www.francepodcasts.com/2018/10/12/les-documents-authentiques/ 09.08.2023

6 .URL : https://journals.openedition.org/apliut/8741 05 .08.2023

7.URL.https://www.researchgate.net/publication/334692830_ 01.08.2023

8.URL : space.univ-eloued.dz/bitstream/123456789/14147/1/mémoire%20fin%20d%27étude.pdf 12.08. 2023

9 . URL : https://archipel.uqam.ca/9647/1/M14797.pdf 12. 08. 2023

10. URL :https://journal.lib.uoguelph.ca/index.php/synergies/article/download/1173/1763?inline=1 15.08.2023

11.URL:https://ru.scribd.com/document/397023698/Pourquoi-Utiliser-Des-Documents-Authentiques-en-Classe-de-Langue# 15. 08. 2023